Շիկահող

Բնակչություն՝ 226

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 980 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Շիկահողն առաջին անգամ հիշատակվել է 13-րդ դարի առաջին կեսին, եղել է Սյունիք նահանգի Կովսական գավառի նշանավոր բնակավայրերից մեկը: Համայնքի տարածքում կան 10-18դդ. գյուղատեղիներ (Վերին և Ներքին Գեղցահանց), եկեղեցիներ, «Կոնասար» կոչվող բերդի ավերակներ, դամբարանադաշտ (մ.թ.ա. 1-ին հազարամյակ): Շիկահողցիները ակտիվ մասնակցել են ինչպես Դավիթբեկի ազատագրական պայքարին, այնպես էլ Զանգեզուրի 1918-20թթ. գոյամարտին, իսկ 1991-93թթ.՝ սահմանների պաշտպանությանը: Գյուղը դարասկզբին ունեցել է մոտ հազար բնակիչ և տարածաշրջանի ամենախոշոր ու բարեկարգ բնակավայրերից էր:
Գյուղում 1887թ-ին դպրոց է բացվել, ապա փակվել է և նորից վերաբացվել 1905 թվականին: 1929թ. գյուղում կազմակերպվել է կոլտնտեսություն, 1965թ. վերակազմավորվել է խորհտնտեսության, որը լուծարվել է 1991թ.: Շիկահողից է ծագել Մելիք-Նուբարյան հայտնի տոհմը, այստեղ է ծնվել նշանավոր հոգևոր և հասարակական գործիչ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 4167 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1795 հա, որից՝
- վարելահող՝ 153 հա, բազմամյա տնկարկ՝ 12 հա, խոտհարք՝ 7 հա, արոտ՝ 926 հա, այլ հողատեսք՝697 հա
- բնակավայրերի հողեր՝ 67 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 4 հա

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1460 հա,
- անտառային հողեր՝ 833 հա, որից անտառածածկ՝ 730 հա
- ջրային հողեր՝ 5 հա